

## ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ

---

- ✓ 2015թ. սեպտեմբերի 3-4-ը ՀՀ ԱՎԾ-ում էին Եվրասիական տնտեսական հանձնաժողովի փորձագետներ Գալինա Իսլամովան և Նատալյա Ֆիլինան ԵԱՏՄ անդամ երկրների «Ծախսեր-թողարկում» աղյուսակների վերլուծության նպատակով,
- ✓ 2015թ. սեպտեմբերի 14-15-ը ՀՀ ԱՎԾ-ում էին Դանիայի վիճակագրության տնօրեն Քարսթեն Ուլրեկ Սանգենբերգը և Դանիայի վիճակագրության ներկայացուցիչ, ԹՎԻՆԻՆԳ ծրագրի ղեկավար Շարլոտ Յուլ Հանսենը «Հայաստանի ազգային վիճակագրական համակարգի ամրապնդում – փուլ II» ԵՄ ԹՎԻՆԻՆԳ ծրագրի բացման արարողությանը մասնակցելու նպատակով,
- ✓ 2015թ. սեպտեմբերի 14-17-ը ՀՀ ԱՎԾ-ում էին ԱՄՆ Գյուղատնտեսության դեպարտամենտի փորձագետներ Մայքլ Սթայները և Ալեքս Մինչենկովը ՀՀ Գյուղատնտեսության համատարած հաշվառմանը USDA տեխնիկական աջակցության ծրագրի շրջանակում ՀՀ ԱՎԾ ԳՀՀ վարչությանը տարբեր հարցերի վերաբերյալ աջակցություն ցուցաբերելու նպատակով,
- ✓ 2015թ. սեպտեմբերի 22-25-ը ՀՀ ԱՎԾ-ում էին Իտալիայի վիճակագրական ծառայության (ISTAT) փորձագետ Դավիդե Դի Լաուրեան և Ֆինլանդիայի վիճակագրական ծառայության փորձագետ Վելի-Մաթթի Տյորմելետոն «Հայաստանի ազգային վիճակագրական համակարգի ամրապնդում – փուլ II» ԵՄ ԹՎԻՆԻՆԳ ծրագրի «Աղքատության վիճակագրություն» բաղադրիչի շրջանակում աջակցություն ցուցաբերելու նպատակով,
- ✓ 2015թ. սեպտեմբերի 27-ից հոկտեմբերի 11-ը ՀՀ ԱՎԾ-ում էր Միջազգային համագործակցության գերմանական (GIZ) ընկերության խորհրդատու Վլադիմիր Մարխոնկոն «Տուրիզմի սատելիտային հաշիվների ներդրման իրագործելիության ուսումնասիրություն» թեմայով քննարկումներ իրականացնելու նպատակով,

- ✓ 2015թ. սեպտեմբերի 28-ից հոկտեմբերի 2-ը ՀՀ ԱՎԾ-ում էին Իտալիայի վիճակագրական ծառայության (ISTAT) փորձագետ Մարիա Փիա Սորվիլլոն և Լիտվայի վիճակագրական ծառայության փորձագետ Ինգա Մասիուլայտիտե-Շուկևիչը «Հայաստանի ազգային վիճակագրական համակարգի ամրապնդում – փուլ II» ԵՄ ԹՎԻՆԻՆԳ ծրագրի «Ժողովրդագրական վիճակագրություն» բաղադրիչի շրջանակում աջակցություն ցուցաբերելու նպատակով,
- ✓ 2015թ. հոկտեմբերի 14-16-ը ՀՀ ԱՎԾ-ում էր Եվրամիության վիճակագրական ծառայության (Եվրոստատ) փորձագետ Սիվ-Իրենե Պեդերսենը ԵՄ - Հայաստան առևտրի, տնտեսական և համապատասխան իրավական հարցերով համագործակցության ենթակոմիտեի 14-րդ նիստին մասնակցելու նպատակով,
- ✓ 2015թ. հոկտեմբերի 19-22-ը ՀՀ ԱՎԾ-ում էին Ֆինլանդիայի վիճակագրական ծառայության փորձագետ Արի Լեպպելատին և Լիտվայի վիճակագրական ծառայության փորձագետ Գեդիմինաս Սանուոլիսը «Հայաստանի ազգային վիճակագրական համակարգի ամրապնդում – փուլ II» ԵՄ ԹՎԻՆԻՆԳ ծրագրի «Նորարարական վիճակագրություն» բաղադրիչի շրջանակում աջակցություն ցուցաբերելու նպատակով: